

ԳԼՈՒԽ ԺԹ

Իսկ նոյն միջոցին Մուշեղ Մամիկոնեանց մեծ իշխանը, Գրիգորի երթալեն վերջ Ներսէի նամակը ձեռքը՝ քիւ մը մտածեց եւ յօնքերը պարզելով աչքերը վերուց սպասաւորին, որ կը սպասէր

– Այդ պատգամաւորը հոս բեր, բայց զգուշացիր, որ այդ երիտասարդին հետ չի տեսնուի, եւ ոչ միայն չի տեսնուին՝ այլեւ իրար ամենեւին չի տեսնեն:

Այս հրամանն առնելով սպասաւորն ելաւ դուրս, եւ երբ Գրիգոր հեռացաւ՝ առաւ պատգամաւորն ու բերաւ իշխանին քով. սա անշարժ՝ մտնող մարդուն վրայ ակնարկ մը նետելով, վայրկեանին ճանչեց իւր եղբոր Դաւթի հաւատարիմ մեր քաջածանօթ Չաւենն էր որ իւր զինուորական կերպարանքն ու սպառազինութիւնն ձտռած անելի երիտասարդ կ'երեւէր, քան թէ մշակի հագուստներով ի Պոլիս:

– Բարի է գալուստդ, Չաւեն եղբայր,– ըսաւ Մուշեղ,– ուրախալի լուր մը կ'ուտայ մեզ քու բերած նամակդ, եղբօրս աղջկան Պոլսէ դարձն անտելով, ինչչափ որ դժուար հաւատալի էլ լինի, դարձեալ մեծ ուրախութիւն կ'իմանանք այսպիսի լուր մը առնելով եւ շնորհակալ ենք Կամսարական իշխանին, որ մեզ գայն կ'իմացնէ: Միայն նամակը այնպիսի խօսք մ'էլ ունի, որ ես չի կրցայ հասկնալ, ի՞նչ կը նշանակէ. «Եթէ Գրիգոր օր մը երեւան չելնէ, Ձեր եղբօր Դաւթի ժառանգ յայտնի լինելով, Արփենին, Մամիկոնեանց եւ Կամսարականաց սերունդը բոլորովին շիջեալ չի համարուի: Այս միայն ուրախութեան առիթ է Ձեզ համար, ինչպէս եղաւ մեզ համար»:

– Մեծ իշխան, ես գրագետ մարդ չեմ,– պատասխանեց Չաւեն,– որ ձեզ պէս կարենամ իշխանական դրութեանց մեկնութիւն տալ, բայց ինձ այնպէս կ'երեւայ թէ այդ խօսքերը կը նշանակեն. աստուած մի արասցէ եթէ Գրիգոր իշխանը մեռած նաեւ լինի, իւր քոյրն Արփենին օրինաւոր ժառանգ է հայրենի իշխանութեան եւ կալուածոց:

Եւ այս խօսքերն ըսելուն՝ տեսնելով Չաւեն Մուշեղի երեսին խաւարիլը, շուտ մը անելցուց.

– Դարձեալ կը կրկնեմ, իմ խելքս չի հասնիր, եւ տեղեկութիւն չունիմ ամենեւին օրինաց. ձեր հրամանն բռնադատ եալ ըսի ինչ որ ինձ թուեցաւ: